ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄՄԱ
(ՈՀ(Ա)Հ)

ԻԱՐԱԲԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Իարաբը քննում է այն, ինչ սահմանում է նահուն բառի համար նախադասության մեջ կամ սահմանում է ողջ նախադասության համար[1]: Ճշգրիտ ըմբռնմամբ՝ նահուն գիտություն է խոսքի կազմության օրենքների մասին: Իարաբը խոսքի բաղկացուցիչ մասերի վերլուծումն է[2]: Այն մուարաբ բառերի[3] վերջավորությունների՝ արտասանական բացահայտ և ենթադրյալ փոփոխությունն է: Իարաբի տեսակները չորսն են՝ ուղղական հոլով / ինքնառական, հայցական հոլով /խնդրառական, սեռական հոլով / հարակցական, ջազմ[4]: Անունները մասամբ մաբնի/ չթեքվող են, հիմնականում՝ մուարաբ: Անվան իարաբի տեսակները երեքն են՝ ուղղական, հայցական, սեռական[5]:

Ուղղական դիրքում գտնվում են մարֆու չթեքված ձևով հանդես եկող ինքնառական անվանաձևերը (մարֆուաթ)[6], դրանք են՝ բայական նախադասության գործող ենթակա, կրավորական նախադասության ենթակայի պաշտոնակատար, անվանական նախադասության սկսող ենթակա, անվանական նախադասության հաղորդող ստորոգյալ, թերիմաստ բայաձևերին (քանան և նրա համասեռ ձևերը) կից անվանաձևեր, բայանման գործառությամբ մասնիկների (իննայի և նրա համասեռ ձևերի) ստորոգյալ, տեսակային ժխտման մասնիկի ստորոգյալ, գործողության/ վիճակի մոտալուտ լինելու իմաստով բայաձևերին (քադան և նրան համասեռ ձևերը) կից անվանաձևեր:

Հայցական դիրքում գտնվում են մանսուբ թեքված ձևով հանդես եկող խնդրառական անվանաձևերը (մանսուբաթ), դրանք են՝ ուղիղ խնդիր, բացարձակ խնդիր, տեղի / ժամանակի պարագա, պատճառի/ նպատակի պարագա, ուղեկցող խնդիր, թերիմաստ բայաձևի ենթակային ստորոգված հաղորդող ստորոգյալ, բայանման գործառությամբ մասնիկների ենթակա, տեսակային ժխտման մասնիկի

անվանական միավոր, գործողության մոտալուտ լինելու իմաստով բայաձևի ենթակային ստորոգված հաղորդող ստորոգյալ, ձևի պարագա, որակական առանձնացման խնդիր, բացառման խնդիր, կոչական:

Սեռական դիրքում գտնվում են մաքրուր թեքված ձևով հանդես եկող հարակցական անվանաձևերը (մաքրուրաթ), դրանք են՝ նախդիր մասնիկով հարակցված անվանական միավոր, լծորդական կապակցության երկրորդ դիրքում հանդես եկող լծորդելի (մուդաֆ իլեյհի):

Եվս հինգ անվանաձևեր կարող են փոխադրվել նախադասության տարբեր դիրքեր՝ հանդես գալով որպես չթեքված ինքնառական և թեքված խնդրառական ու հարակցական միավորներ: Դրանք են՝ նկարագրական կառույցի նկարագրվողին կամ որակվողին հաջորդող որոշիչ (սիֆա/նաթ), ուա շաղկապի միջոցով շաղկապյալին հաջորդող շաղկապված (ատֆ նասակ), սաստկական կառույցի երկրորդ դիրքում հանդես եկող միավոր (թաուքիդ), որը հետևում է առաջին դիրքում հանդես եկող միավորին (մուաքքիդ), փոխարինական կառույցի երկրորդ դիրքում հանդես եկող միավորներ (բադալ և ատֆ բայան), որոնք փոխարինում են առաջին դիրքում հանդես եկող միավորին (մուբդալ մինհու)[7]:

Բայերը մասամբ մուարաբ են, հիմնականում՝ մաբնի: Ալ-մուդարիու բայական հիմքը պատկանում է թեքվող լեզվական միավորների շարքին և կարող է հանդես գալ թե' ուղիղ (մարֆու), թե' թեքական (մանսուբ, մաջզում) տարբերակներով: Ներկա ժամանակի բայի իարաբը իրացվում է այն դիրքերում, երբ նրան չեն կցվում իգականի նունը և թաուքիդի երկու նուններից որևէ մեկը՝ թեթևը կամ ծանրը: Բայի իարաբի տեսակները երեքն են՝ ուղղական (այս դիրքում գտնվում է ներկա ժամանակի չխնդրառված և չջազմավորված բայը), հայցական (այս դիրքում գտնվում է խնդրառական գործոնով նախորդված բայաձևը), ջազմ (այս դիրքում գտնվում է ջազմավորող կամ պայմանական գործոնով նախորդված ներկա ժամանակի բայաձևը):

Այսպիսով, իարաբն ունի չորս տեսակ, որոնցից երկուսը՝ ուղղականը և հայցականը, հատուկ են անուններին և բայերին, սեռականը՝ միայն անուններին, ջազմը՝ միայն բայերին: Ինչ վերաբերում

է հարֆերին/ մասնիկներին, ապա դրանք մաքնի են և պաշտոն չունեն իարաբում:

Իարաբի տեսակներն իրացվում են հիմնական և հավելյալ ցուցիչների միջոցով[8]: Հիմնական ցուցիչներն են՝ *դամմա, ֆաքիա, քասրա,* սուքուն: *Դամման* ուղղականի հիմնական ցուցիչն է չորս դիրքում՝ եզակի թվով անվանաձևերում, ներքին կազմության հոգնակի անվանաձեերում, արտաքին կազմության իգական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, ներկա ժամանակի բայաձևերում, որոնց վերջավորությանը չի կցվում իգականի նունը կամ թաուքիդի նունը: Ուղղականն ունի երեք հավելյալ ցուցիչ՝ ուաու, որը վտխարինում է դամմային արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, հինգ անվանաձեերում, ալիֆ, որը փոխարինում է դամմային երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, նուն, որը փոխարինում է դամմային ներկա ժամանակի բայաձևերում, որոնց կցվում է կամ երկակիի, կամ հոգնակիի, կամ իգական խոսակցի նունը:

Ֆաքիան հայցականի հիմնական ցուցիչն է երեք դիրքում՝ եզակի անուններում, ներքին կազմության հոգնակի անվանաձևերում, խնդրառական մասնիկով նախորդված ներկա ժամանակի բայաձևերում, որոնց կցված չէ իգականի նունը կամ թաուքիդի նունը: Հայցականն ունի չորս հավելյալ ցուցիչ՝ ալիֆ, որը փոխարինում է ֆաքիային հինգ անվանաձևերում, քասրա, որը փոխարինում է ֆաքիային արտաքին կազմավորման իգական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, յա, որը փոխարինում է ֆաքիային երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, արտաքին կազմավորման արական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, նունի սղում, որը փոխարինում է ֆաքիային խնդրառված և ջազմավորված հինգ բայաձևերում:

Քասրան սեռականի հիմնական ցուցիչն է երեք դիրքում՝ եռահոլով եզակի անուններում, ներքին կազմության հոգնակի եռահոլով անուններում, արտաքին կազմության իգական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում: Սեռականն ունի երկու հավելյալ ցուցիչ՝ յա, որը փոխարինում է քասրային երեք դիրքում՝ հինգ անվանաձևերում, երկակի թվով անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, արտաքին կազմության արական հոգնակի

անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, ֆաթհա, որը փոխարինում է քասրային ձևաբանորեն արգելափակված եզակի և ներքին կազմավորման հոգնակի անվանաձևերում:

Սուքունը ջազմի հիմնական ցուցիչն է ներկա ժամանակի կանոնավոր բայաձևերում, որոնց կցված չէ իգականի նունը կամ թառքիդի նունը: Ջազմի հավելյալ ցուցիչը սդումն է (հազֆ), որը փոխարինում է սուքունին երկու դիրքում՝ ներկա ժամանակի՝ թույլ տառով վերջավորվող բայաձևերում, նունի սղմամբ ջազմավորվող հինգ բայաձևերում:

Այսպիսով, իարաբն ունի տասնչորս ցուցիչ, որոնցից չորսը հիմնական են, տասը՝ հավելյալ: Հավելյալ ցուցիչներից երեքը փոխարինում են դամմային, չորսը՝ ֆաթհային, երկուսը քասրային, մեկը՝ սուքունին: Հավելյալ ցուցիչների՝ հիմնականներին փոխարինելը իրականացվում է յոթ դիրքում՝ քասրայի փոխարեն ֆաթհայով հարակցված անորոշ առման երկհոլով անուններում, ֆաթհայի փոխարեն քասրայով խնդրառված արտաքին կազմության իգական հոգնակի անուններում և դրանց նմանվող անվանաձևերում, սուքունի փոխարեն բայավերջի սղմամբ ջազմավորվող՝ թույլ տառով վերջավորվող ներկա ժամանակի բայաձևերում, դամմայի փոխարեն ալիֆ-ով ինքնառված, ֆաթհայի և քասրայի փոխարեն յա-ով խնդրառված ու հարակցված երկակի անուններում, դրանց նմանվող անվանաձևերում, դամմայի փոխարեն ուաու-ով ինքնառված, ֆաթհայի և քասրայի փոխարեն յա-ով խնդրառված ու հարակցված արտաքին կազմության արական հոգնակի անուններում, դրանց նմանվող անվանաձևերում, դամմայի փոխարեն ուաու-ով ինքնառված, ֆաթհայի փոխարեն ալիֆ-ով խնդրառված, քասրայի փոխարեն յա-ով հարակցված հինգ անվանաձևերում, դամմայի փոխարեն նունի առկայությամբ ինքնառված, նունի սղմամբ խնդրառված և ջազմավորված հինգ բայաձևերում:

Երբեմն իարաբի ցուցիչը կարող է լինել ոչ թե բացահայտ, այլ ենթադրյալ[10]: Իարաբի բոլոր ցուցիչները ենթադրյալ են սալիֆ մաքսուրայով վերջավորվող անվանաձևերում, լծորդական կառույցի մուդաֆ դիրքում հանդես եկող լծորդվածի մեջ, որին կցված է եզակի թվի առաջին դեմքի կցական դերանունը, բաղադրյալ հատուկ անուններում[11]: Ուղղականի և սեռականի ցուցիչները ենթադրյալ են թանվին քասրայով

վերջավորվող անորոշ և որոշյալ առմամբ անվանածներում: Ուղղականի ցուցիչը ենթադրյալ է ժխտական նախադասության մեջ ենթակայի դիրքում գտնվող՝ մին առաջադաս մասնիկով հարակցված անորոշ անվանածևում և ենթակայի դիրքում գտնվող՝ նախդիրի նմանվող ոուբբա մասնիկով հարակցված անվանածևում:

Ինչ վերաբերում է բայերին, ապա ուղղականի և հայցականի ցուցիչները ենթադրյալ են ներկա ժամանակի՝ ալիֆ մաքսուրայով վերջավորվող բայածներում, իսկ ուղղականինը՝ նաև ուաու-ով և յա-ով վերջավորվող բայածներում:

EMMA KHACHATRYAN
(RA(S)U)

THE TYPES AND SIGNS OF IARAB

Iarab is the evident or supposed change of the pronunciation of the word that is declined. Iarab can be of four types: nominative, genitive, accusative and jazm. Two of them, nominative and accusative, are peculiar to the verbs and nouns, genitive is peculiar to the nouns and jazm to the verbs only. The prepositions are not declined. Iarab can be formed by four general (damma, fatha, kyasra, sukkun) and ten complementary signs, three of which can be changed by damma, four by fatha, two by kyasra and one sukkun. The general signs' replacing by the complementary is usually made in seven positions. Sometimes iarab's signs can be not only evident, but also in the end of the word, supposed to be declined.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս մասին մանրամասն տե՛ս Խաչատրյան Է., Իարաբի շրջանակները դասական արաբերենի լեզվաբանական ավանդույթում, «Մերձավոր Արևելք» հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 132-134:
2. Մուհամմադ Ալ-Անտաքի, Ալ-մինհաջ ֆի ալ-կաուաիդ ուա ալ-իարաբ, Բեյրութ 1978, էջ 3:
3. Մուարաբ է լեզվական թեքվող (եռահոլով և երկհոլով) այն միավորը, որի բառավերջի ձայնանշանը փոխվում է՝ ըստ նախադասության մեջ բառի դիրքի: Այս մասին տե՛ս Մուհամմադ Նուր Ալ-Դին Ալ-Տաուաշի, Թալիմ ալ-լուղաթի ալ-արաբիյա, 2-րդ մաս,Դամասկոս 2001, էջ 5:
4. Բայի դիրքն է հատած վիճակում. նրա ելքային իրացումն ապահովվում է ջազմավորող որևէ նախդիր մասնիկով: Այս մասին տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, Ալ-լուղաթու ալ- արաբիյա,1-ին մաս, Հալեպ 1986թ, էջ 148:
5. Ուղղականն իրացվում է u (ու), հայցականը՝ a (ա), սեռականը՝ i (ի) ձևույթներով: Դասական արաբերենում եզակի թվով դրված և ներքին կազմավորմամբ հոգնակի անվանածևերի համար օրինաչափ է թեքման եռահոլով համակարգը: Որոշ անվանածևեր անորոշ վիճակում ունեն միայն երկու հոլովական թեքում՝ ուղիղ հոլով (u (ու)- ով կազմվող կամ ուղղական), անուղղակի հոլով (a (ա)-ով կազմվող կամ

սեռական ու հայցական): Այս մասին մանրամասն տե՛ս Гранде Б.М., Арабская филология, М., 1990.

6. Մաղիկ Սունդուկ, Ալ-արաբիյա, Թեհրան, հիջրայի 1372, էջ 89-91:
7. Աբու Բեքր Ալա Աբդ Ալ-Ալիմ, Դուրուս ֆի ալ-արաբիյա, Կահիրե 2002, էջ 235-237:
8. Ալ-Սայյիդ Ահմսդ Ալ- Հաշիմի, Ալ-կառուահդ ալ-ասասիյ լիլուղաթի ալ-արաբիյա, Բեյրութ, հիջրայի 1354, էջ 48-52:
9. Երբ արաբերենի բարբառներում հոլովական թեքումը և եռաստիճան համակարգն ընկան, a վերջավորությունը բարբառային շատ բառերում պահպանեց մակբայական իմաստը: Հայտնի է, որ արևմտյան-արամեական խոսվածքներում, արամեական արձանագրություններում, եգիպտական պապիրուսներում, նաբատական արձանագրություններում անունները ունեցել են a վերջավորությունը՝ որպես որոշյալության ցուցիչ: Չկա բավարար բացատրություն, թե ինչու հատկապես հայցականը և ոչ թե ուղղականը կարող էր ստանալ որոշյալության իմաստ: Որոշյալության իմաստով, մակբայական և պարագայական նշանակություններով a վերջավորության ամրացումն օժանդակել է նրա պահպանմանը և տարածմանը: Ինչ վերաբերում է i և u վերջավորություններին, ապա դրանք որևէ իմաստ չեն ունեցել, և նույնիսկ կարելի է ենթադրել, որ դրանք հիմնական և ավելի ամրացած a-ի ձևափոխություններ էին: Այս մասին մանրամասն տե՛ս Гранде Б.М., Арабская филология, М., 1990.
10. Աբդ Ալլահ Ալ-Թտտաուի, Ուդ իլա ասսիհա ալլուղաուիյա, Կահիրե, 2002, էջ 65:
11. Օրինակ՝ Բալաբաքքա, Հադրամաութա և այլն: Այս մասին տե՛ս Հիսամ Ալ-Խատիբ, նշվ. աշխ. մեջ, էջ 32: